

Անշո՛ւշտ: Ու այդ արքայական ճակատը - շէնքերունը - անվրէպ պատգամ էր այն օրերուն հուշակի հասած գանկաբանութեան անունով գիտութեան մը, թէ եւ կովարձ Ակոյին ճակատն ալ ունէինք իբր հակափաստ, քանի որ երանելի հովիւին ալ գանկը լերկ էր ու ճաղա՛տ: Արեւմտեան միտքի մեծ ներկայացուցիչներուն մօտ ճաղատութիւնը փառք մըն էր իմ պատանի դատողութեանս մէջ ու Մաթիկը այդ առաւելութեամբ կը շահէր: Բայց ինչ որ ստոյգ էր, ատիկա գոյութիւնն էր այդ հսկայ ճակատին տակոքը ու այդ լերկ գանկին ներքեւ բացառաբար հօօր ու փայլուն իմացականութեամբ մը: Թագաւորը խշտի մէջ չէր բնակեր ու շատ պալատներ մեծ մարդոց բնակարան են ծառայած: Անոր միտքը մէկն էր այն հագուազիւտ հրաշքներէն, որոնց լաւ կ'ընենք չհանդիպելով:

Այդ միտքը օժտուած էր շատ ուշագրաւ կարողութիւններով: Ամէնէն առաջ ահաւոր յիշողութեամբ մը, որ կը զատուէր ուրիշ բացառիկներէ՝ յիշատակներ կենսագործելու մասնայատկութեամբ մը: Կան այդ մարդերը, որոնց պատմումը ներգործական ապրում է եւ ոչ թէ չէգոք թւում: Մաթիկ իր յիշատակները կեանքի կտորներու կը վերածէր, պատրանք ստեղծող ու ատով ալ չտժգունող: Յետոյ իրն էր բացառիկ շնորհը դարձեալ յուշէ յուշ, մտածումէ մտածում, դէպքէ դէպք լարեր նետելու, արտաքնապէս իրարու անհաղորդ իրողութիւններ ու միջեւ գտնելու շքեղ, համոզիչ մերձեցումներ, իմաստասիրական թերմերու առատութեամբ ու պատմութեան իմաստասիրութիւնը արժեւորել ձգտող քաղցր միամտութեամբ՝ հաւասարապէս տպաւորիչ: Բայց այլապէս խորհրդաւոր հրապոյր մըն էր իր մօտ դէպքերը, իր փաստին համեմատ, օգտագործելու իր դիւրութիւնը, հետեւցնելու ու համոզելու իր ջերմ տուրքերը: Այս յատկութիւնները, փորձառութեան բովէն անցնող մարդը կ'ընեն վարիչ, վարպետ, մագնիս: Մաթիկ Մելիքխանեանց յեղափոխական մը միայն կրցած էր ըլլալ առայժմ: Իմ